

ՏԱՀԱՆՆԱԳԻՄԱՆ ՀԱՐՅՐ

Եթէ վերջին Բալկանեան պատերազմը Տաճկաստանի համար աւելի բարեկաշտող վախճան ունեցաւ, քան կարելի էր սպասել նախքան Բալկանեան միացեալ պետութեանց մէջ անհաշտ հակառակութեան երեան դալը, այնուամենայնիւ Տաճկաստանի դերը եւրոպայում փաստօրէն ոչնչացաւ: Ինչպէս Ափրիկայում Տաճկաստանը կորցրեց իւր գոյութիւնը՝ նոյնպէս և եւրոպայում, թէև այտուղ պահպանել է դեռ ևս Բալկանեան թերակղզու մի չնչին կտորը: Եւ այժմ Ասիական Տաճկաստանի վիճակի մասին եղած հարցը հերթի է դրուած: Արդեօք այնտեղ ևս Օտոմանեան պետութեան մնացած մասի անկման գործողութիւնն անողոք անխուսափելիութեամբ առաջ կերթայ, թէ տաճիկներին դեռ ևս վիճակուած է պահպանելու իրանց ասիական տիրապետութիւնները, զուցէ մինչև անգամ Ասիայում պէտք է նորա վերածնունդն և ամբապնդուին իրենց կրած փորձութիւններէց յետոյ: Պատմութեան մէջ յայտնի են դէպքեր, որ այն գաղութների կորուստը, որոնք օրգանապէս կապուած չեն եղել մայրաքաղի հետ և միայն ծանրացրել են նորա բիւղձէն, չէ թուլացրել պետութիւնը, այլ ընդհակառակը դորանով նպաստել է նորա ուժեղացման: Այդպիսի գաղութներ վերջին ժամանակ Տաճկաստանի համար եղել են Մակեդոնիան, Կրետէն և այլն, որոնք պետութեան թանգ են նստել և ծառայել են իբրև աղբիւր անթիւ միջազգային բարդութիւնների և էապէս Տաճկաստանին ոչինչ չեն տուել: Վերջին Բալկանեան պատերազմն այն արմատական անդամահատութիւնն եղաւ, որը կտրեց Օտոմանեան պետութեան ամենահիւանդ մասերից մէկը: Կարելի է նոյն իսկ կասկածել Բալկանեան թերակղզում այժմ վերականգնած հաւասարակշռութիւնը հաստատուն լինելու նկատմամբ: Բայց որքան էլ նա լինի անկայուն՝ յամենայն դէպս աւելի քան աներկբայելի է, որ թերակղզու քարտեզի վրայ Տաճկաստանի անմիջական յարաբերութեամբ ապագայ փոփոխութիւններ չեն կարող լինել: Կարող են փոփոխուել Յունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի և Ռումինիայի այժմեան սահմանները, բայց հազիւ թէ հնարաւոր լինի Բալկաններում Տաճկաստանի սահմանները նոր ընդարձակումն: Դորա համար և եթէ Ասիական Տաճկաստանի բնակչութիւնը միատեսակ լինէր ազգային և կուլտուրական տեսակէտից, կարելի կըլինէր ենթադրել, որ Տաճկաստանի հեռացումն եւրոպայից, ապառնով նորան ազգայնապէս բոլորովին օտար վիճակները պահպանելու անհրաժեշտութիւնից, կըծառայէր նորան իբրև ելակէտ վերածնունդու Ասիայում: Սակայն Ասիական

Տաճկաստանի ազգաբնակչության ազգային և կրօնական կազմի մերձաւոր տնտղելը երևան է հանում՝ որ Ասիայում էլ կան կենտրոնախոյս ոյժեր, չափազանց նման այն ոյժերին, որոնց Օտտոմանեան պետութիւնն անկարող եղաւ եւրոպայում ղեկավարել:

Տաճկական վիճակագրութիւնը, հարկաւ, չափազանց անճիշտ է, բայց այնուամենայնիւ նորանից կարելի է գտնէ յարաբերական ուղիղ եզրակացութիւններ անել: Ֆրանսիական հեղինակ Կոնտանսի¹⁾ բերուած թուերով Ասիական Տաճկաստանում 17,474,424 բնակչին զալիս է 12,991,128 մահմեդականն: Նրանցից տաճիկներ և իրենց հետ ծուլած ազգեր—7,815,785, արաբներ և ասորիներ—3,382,316, քրդեր, թուրքմէններ և սրանց ցեղակից ազգեր—1,793,327, քրիստոնեաներ—3,849,595, նրանցից ուղղափառներ—1,859,288, կաթոլիկներ—704,930, բողոքականներ 5,689, նեստորականներ, յակոբեաններ և այլն—232,522, հայեր—1,133,779 (նոքա բաժանուած են՝ հայ լուսաւորչականներ—958,919, կաթոլիկներ—86,613, բողոքականներ—88,247): Հրէաներ—192,696, զրուզներ—151,837, անասաբիցիներ—128,720, իսկ ֆնացած կրօնի պատկանող ազգութիւններ (ցիկաններ և այլն)—160,448: Այսպիսով եթէ մահմեդականներն ընդհանուր կերպով կազմում են ամբողջ ազգաբնակչության 74,3⁰/₁₀, տաճիկներն Ասիական Տաճկաստանում կազմում են բոլորի 44,8⁰/₁₀-ը: Բայց եթէ տաճիկները հաւասար չափով լինէին ցրուած Ասիայում եղած տաճկական տիրապետութեան հողամասերի վրայ, ապազայ հեռանկարները նրանց համար չէին լինիլ այնքան տխուր, որովհետեւ նոքա գտնէ կրկազմէին յարաբերական մեծամասնութիւն: Արդարեւ տաճկական տարրի գլխաւոր խմբակցութիւնը կենդրոնացած է Անատոլիայում, որտեղ 6,379,089 բնակիչներից տաճիկները կազմում են 5,375,490, այսինքն ամբողջ ազգաբնակչության 84,2⁰/₁₀: Ըշմարիտ է, ցեղական յարաբերութեամբ և այդ փոքրասիական «տաճիկ»ները շատ քիչ ընդհանուր բան ունեն այն տաճիկ նուաճող ցեղերի հետ, որոնք երևան են եկել Միջին Ասիայից, և, արագ ուժեղ թափով ոչնչացնելով թագաւորութիւններ, որոնք պատահում էին նոցա ճանապարհին, կազմեցին Օտտոմանեան կայսրութիւնը: Դրանք մեծ մասամբ են յոյներ, հայեր և Անատոլիայի այլ ազգութիւններ, որոնց տաճկական տիրապետութեան սկզբում դարձրիլ էին մահմեդական կրօնին և կրօնական յարաբերութեամբ միացրիլ նուաճող ցեղի հետ: Բայց այդ միացումն այնքան լիակատար էր, որ ազգային անջատականութեան մասին չէ կարող խօսք լինիլ այդ

¹⁾ L. de Contenson. « Chrétiens et Musulmans ». Paris, 1901, էջ 127.

ձուլուած ժողովրդների և տաճիկների մէջ: Աւելի նուազ էր տաճիկների բարւոք դրութիւնը Ասիական Տաճկաստանի ֆաշայած մասերում: Հայաստանում նրանց թիւը 41,3³/₁₀ աւելի չէ. Ասորիքում և Միջագետքում նոքա կազմում են չնչին տոկոս: Ասորիքում մահմեդականները կազմում են ամբողջ ազգաբնակչութեան 54,3⁰/₁₀, բայց այդ մահմեդականների ճնշող մեծամասնութիւնը կազմում են արաբները, այնպէս որ Ասորիքում մահմեդականների 1,538,490 ընդհանուր թուի մօտ արաբները հաշուում են 1,381,486, տաճիկները քուրդերի, չերքէզների և այլ ազգերի հետ կազմում են ընդամենայն 157,006: Բոլորովին նոյնն է և Միջագետքում, որտեղ մահմեդական—արաբները կազմում են 90⁰/₁₀ ամբողջ ազգաբնակչութեան (շուրջ 2,000,000 են 2,200,280-ից) տաճիկները քրդերի և այլոց հետ հաշուում են ընդամենայն 75,480: Տաճկաստանի այդ արաբական տիրապետութեանց մէջ Օտոմանեան կայսրութեան մինչև այժմ տիրող ցեղը ներկայացուած է գլխաւորապէս աստիճանաւորներով և զինուորականներով:

Մենք այժմ չենք խօսիլ արաբների և տաճիկների մէջ եղած յարաբերութեանց մասին, այլ սահմանափակուենք այս անգամ Հայկական հարցով: Տաճկական պաշտօնական վիճակագրութիւնը հաստատում է, որ Տաճկահայաստանի վեց վիլայէթներում կան հայեր ընդամենայն 15,4⁰/₁₀ (828,841 են 5,381,535-ից): Այդ բանից տաճկական կառավարչական շրջանները օգտւում են, որ ցոյց տան, թէ Տաճկահայաստանում չէ կարելի հայերին տալ այնպիսի նշանակութիւն վարչական իշխանութեան և ենթադրեալ տեղական ինքնակառավարութեան մարմինների մէջ, ինչպէս մահմեդականներին, որոնք այնտեղ կազմում են ճնշող մեծամասնութիւն: Սակայն աւելի նոր փաստերը Տաճկա-Հայաստանի ազգաբնակչութեան կազմի նկատմամբ ցոյց են տալիս, որ հայերն ամենևին չեն կազմում այդպիսի սակաւաթիւ փոքրամասնութիւն, ինչպէս հաստատում է Տաճկաց կառավարութիւնը:

Բանն այն է, որ Տաճկաց կառավարութիւնը ռուս-տաճկական պատերազմից յետոյ ձգտելով խուսափել կատարելու Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածը, առաջ է բերել Ասիական վիլայէթների նոր վարչական բաժանումն և աւելացրել է բազմաթիւ հայ ազգաբնակչութեամբ տեղաւորուած վիճակներին այլ շրջաններ, բնակեցրած քրդերով, չերքէզներով և տաճիկներով, որպէս զի արհեստական կերպով իջեցնէ հայ ազգաբնակչութեան տոկոսային յարաբերութիւնը: Եթէ բաժանենք Հայկական վեց վիլայէթներից՝ իրզերում, Վան, Բիթլիս, Սարըրըզ, Դիարբէքըր և Սըվազ, նախամտածուած կերպով նրանց կցուած ոչ հայկական հողամասերը ¹⁾, ստացւում է բոլորովին այլ թուանշաններ:

1) Sté Ludovic de Contenson. Les reformes en Turquie d'Asie, Paris, 1913 էջ 17:

Այդպիսով Տաճկա-Հայաստանի ազգաբնակչության թիւը հասնում է 2,615,000: Նրանցից մահմեդականներ—1,178,000 կամ 45,1⁰/₁₀₀, քրիստոնեաներ—1,183,000, կամ 45,2⁰/₁₀₀, քննարկելով իրենց ներքին—254,000, կամ 9,6⁰/₁₀₀: Իսկ հայերի թիւը—1,018,000 կամ 39⁰/₁₀₀: Եւ այսպէս թէև Տաճկա-Հայաստանում—միացրած իրենց բնական սահմաններով, հայերը չեն կազմում մեծամասնութիւն, նոքա յամենայն դէպս կազմում են շատ աւելի աչքի ընկնող փոքրամասնութիւն, քան թէ ընդունուած է կարծել Հայաստանի վեց վիլայէթների պաշտօնական վիճակագրութեան հիման վրայ: Սակայն պէտք է և ուշադրութեան առնենք, որ հայ ազգաբնակչութիւնը խոշոր թուով միայն այդ վեց վիլայէթներում չեն: Այդ վիլայէթներին պէտք է աւելացնել նաև Հալէպի վիլայէթի երկու սանջակը, Մարաշ և Օրթու, այնուհետև Տրապիզոնի վիլայէթը Սև ծովի վրայ, Ինչպէս և Ադանայի վիլայէթը, տարածուած Միջերկրական ծովի վրայ Ալէքսանդրիտայի ծոցի մօտ: Վերջին վիլայէթում հաշոււմ են 100,000-ից աւելի հայեր: Բացարձակ գերակշռող մեծամասնութիւն հայերը կազմում են միմիայն Սասունի շրջանում (Մեծ Հայաստանում) և Զէյթունի շրջանում (Փոքր Հայաստանում):

Սակայն հիմք կայ կարծելու՝ որ հայերի թիւը Տաճկաստանում իրականապէս աւելի է, քան թէ ցոյց են տալիս վերոյիշեալ թուերը: Կոնտանսոն¹⁾ այդ հարցի վերաբերեալ բերում է հետևեալ դիտողութիւնները: Անցեալ դարի վերջերում հայոց պատրիարքը պաշտօնական հաղորդագրութեան մէջ՝ ուղղուած Տաճկաց կառավարութեան հաշուել է հայ լուսաւորչական դասնութեան պատկանող հայերի թիւը 1,250.484: Բայց, իրեն պատրիարքի կարծիքով, այդ թիւը չափազանց փոքր է, որովհետև պէտք է կարծել, որ հայերի թիւն որոշելիս երկիւղից, կարծելով որ մի գուցէ վիճակագրութիւնն անում են իրենց հարկերը աւելացնելու նպատակով, հայերի մօտաւորապէս $\frac{1}{5}$ -ը ծածկուած է: Այդ ենթադրութիւնն հաստատուում է և նորանով, որ 1882 թ. Երուսաղէմի պարտքերը տալու համար հայերի կազմած ազգային տուրքը մասնագրելու դէպքում պաշտօնական թիւը ազգաբնակչութեան նոյնպէս մեծացրած է եղել $\frac{1}{5}$ -ով այն հիման վրայ, որ մօտաւորապէս մի երրորդ մասը տաճկահայերի, խուսափելով վճարել զինուորական տուրքը, որ «սահմանադրական» բեժիմից առաջ զինուորական պարտականութիւնը կատարելու փոխարէն զրուած էր նրանց վրայ, չէ երևում ցուցակներում: Այդ ժամանակ Տաճկա-Հայաստանի այդ

1) L. de Contenson. Chrétiens et Musulmans. Paris, 1901 էջ 150—153:

մարդկանց քանակութիւնը դորա համար և մեծացրած է եղել 700,000-ից մինչև 1,050,000, Այդ թուանշանին աւելացնելով նոյնքան և կանանց թիւը, մենք ստանում ենք տաճկահայերի համար 2,100,000, որ և ուշադրութեան առնելով այդ վիճակագրութեան հնազոյն ձևը, շատ ուժեղ չէ տարբերում վերև առաջ բերած հայլուսաւորչական պատրիարքի մասնաշաժ 1,875,726 թուի հետ։ Այդ թուին, որ ներկայացնում է միայն հայլուսաւորչական դաւանութեան պատկանող հայերը, միացնելով և այլ դաւանութեան հայերի թիւը—86,613 կաթոլիկներ, 88,257 բողոքականներ, այնուհետև 280,000 հայեր, որոնք ապրում են եւրոպական Տաճկաստանում, որոնցից փոքր չափով, 180,000 գտնուում են Կ. Պօլսում, մեկն ստանում եմք քնդամենայն 2,233,586, Այդ թուից հանելով 1894—96 թ. ջարդերի ժամանակ սպանուածներին, Տաճկաստանից զաղթածներին և այլն 400,000 հայ, մնում է ամբողջ Տաճկաստանում հայ ազգաբնակչութեան թիւը 1,930,586 մարդ, այսինքն ամբողջ հայոց ժողովրդի (3,840,586) կէսից աւելի։ Այդ թուանշանները ճիշտ են թէ ոչ, յամենայն դէպս անկասկած է, որ հայերի թիւը Ասիական Տաճկաստանում այնքան աչքի ընկնող է, որ նրանց յարաբերութիւնը դէպի տաճկական պետութիւնը ներկայանում է ամենակարևոր փաստերից մէկը, որ հնարաւորութիւն է տալիս նորա յետագայ գոյութեան։ Կարիք չկայ այստեղ առաջ բերելու թէ հայերի համար ի՞նչ է եղել Արդու Համիդի բռնութիւնը։ Սարսափեցնող 300,000 թիւը այն հայերի, որոնք և 1894—96 թ. թ. ջարդերի ժամանակ մորթուուել են և ենթարկուել տանջանքների, կատարուած ոչ միայն Ասիական Տաճկաստանի հեռաւոր անկիւններում, այլ և կայսրութեան մայրաքաղաքում—Կ. Պօլսում, ինքն իրենից շատ բան է ասում։ 1908 թ. սահմանադրութիւնը հռչակելուց յետոյ «Նոր» բռնութիւն ոչ մի բանով չփոխեց հայերի դրութիւնը դէպի լաւը, և Ազանայի ջարդը 1909 թ., երբ սպանուեցին 20,000-ից աւելի հայեր, պարզ ցոյց տուեց թէ Տաճկաստանում ինչպէս են վերաբերում դէպի հայերը յետադիմականները, որոնք սարքեցին Ազանայում հայկական կոտորած հէնց նորա համար, որ սահմանադրական յեղաշրջման գլխաւոր մեղաւորներ համարում էին հայերին։ Հասկանալի է, որ այդ դրութեան մէջ—մշտական բռնութիւնների և ջարդերի երկիւղի ներքոյ, հայերը չէին կարող շարունակել իրենց կեանքը։ Այդպիսի անհաշտ թշնամական դրութիւն մէկ կողմից հայերի և միւս կողմից տաճիկների ու քրդերի մէջ, լցուած էր ոչ միայն ներքին մեծ վտանգներով Տաճկաստանի համար, այլ և կարող էր ուզած բոլոր պէին առաջ բերել միջազգային չափազանց լուրջ բարդութիւններ։ Հայկական «բարենորոգութիւնների» հարցը դորա համար և ներ-

կայումս կրկին զբաղեցնում է եւրոպական դիւանագիտութիւնը:

Այդ հարցը, ինչպէս և մնացեալ տաճկական բարենորոգութիւնների վիճակը, ունի երկար պատմութիւն: Զիտսելով այստեղ եւրոպական պետութիւնների հայերի պաշտպանութեան համար աւելի վաղ ժամանակուայ ձեռք առած միջոցների մասին, վերջին ռուս տաճկական պատերազմից անմիջապէս յետոյ Տաճկաստանից ստացուած է խոստումն բարելաւելու հայերի դրութիւնը: Սան-Ստեփանոյի խաղաղ դաշնագրութեան 16-րդ յօդուածով Դուռը պարտաւորուել է հայերով բնակեցրած շրջաններում անհրաժեշտ բարենորոգութիւններ մտցնել և ձեռք առնել միջոցներ նրանց պաշտպանելու քրդերի և չերքէզների բռնութիւններից: Համանման և համարեա նոյնատեսակ խոստումն Տաճկաստանի կողմից եղել է և Բերլինի 61-րդ յօդուածով: Սակայն Տաճկաստանի Անգլիայի հետ 4 յունիսի 1878 թ. կապած պայմանը, որով Կիպրոս կղզու զիջողութեամբ ապահովուում է Ասիայում տաճկական տիրապետութեանց անձեռնմխելութիւնը, Արդուլ Համիդին հնարաւորութիւն է տուել չկատարելու իրենց յանձն առած պարտաւորութիւնները: Անգլիայի և Ռուսաստանի մէջ եղած հակառակութիւնը, որն այն ժամանակ որոշում էր բոլոր միբձաւոր-արեւելքի յարաբերութիւնները մեծ պետութիւնների մէջ, միջոց տուաւ Եւրոպայում տաճկաց տիրապետութիւնը պահպանելու Մակեդոնիայում, իսկ Ասիայում՝ շարունակելու բացարձակ կամայականութեամբ թիմը Հայաստանում: Միայն 1894 թ. Տաճկաստանում սկսած հայկական խմբական ջարդերը հարկադրեցին մեծ պետութիւններին փոխելու իրենց զբաւորական վերաբերմունքը դէպի հայկական հարցը: 1895 թ. մայիսի 11-ին Կ. Պօլսում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանները ներկայացրին յուշագիր, որի մէջ մշակուած է եղել հայկական վիլայէթներում լինելիք բարենորոգութիւնների ծրագիրը: Նա բովանդակում է իւր մէջ հետեւալ կէտերը. հայկական վիլայէթները պէտք է վերստին ենթարկել դասաւորութեան՝ այնպիսի ձևով, որ այն շրջանները, որոնք պարունակում են մեծ քանակութեամբ մահմեդականներ՝ բաժանուեն նրանցից, որտեղ հայերը կազմում են ազգաբնակչութեան ստուար մասը: Կ. Պօլսում պետութիւնների դեսպաններին պէտք է վերապահուի իրաւունք վիլայէթների պետերին (վալի) նշանակելիս իրենց մասնակցութիւնն ևս երևայ, այսինքն իրաւունք հռաջնելու այն անձին, որը, եւրոպական դեսպանների կարծիքով, որ և է կերպ ճանաչուած է անընդունակ բաւարար կերպով կատարելու իւր պարտականութիւնները: Վալիներ կարող են լինել և քրիստոնեաներից (մինչև այժմ այդ պաշտօններում հայոց վիլայէթներում չէ եղել քրիստոնեայ, թէև քրիստոնեաների

այդ իրաւունքը, նշանակուելու այդպիսի վարչական պաշտօններում, բազմաթիւ անգամ հաստատուելէ, սկսած հաթթը հիւմայիւնի հրատարակութեան 1856 թուից), Այդ բարենորոգութիւնների իրականացման վերահսկողութեան համար նշանակուելու է յատուկ կոմիսար, ըստ որում նորա օգնականը պէտք է լինի մահմեդական, եթէ կոմիսարը քրիստոնեայ է, և ընդհակառակը, օգնականը լինի քրիստոնեայ, եթէ կոմիսարը մահմեդական է:

Հայոց գործերի վրայ վերահսկողութիւն (կոնտրոլ) ունենալու համար պէտք է հաստատուի մշտական Յանձնաժողով, բաղկացած նախագահից և վեց անդամներից, քրիստոնեաներից և մահմեդականներից հաւասար կերպով: Այդ Յանձնաժողովի անդամները իրաւունք ունեն գնալ Հայաստան իրականացնելու կոնտրոլը: Միւս վիլայէթներում, որոնց մէջ կան նշանաւոր չափով հայերի քանակութիւն, բացի Մեծ Հայաստանի վեց վիլայէթներից, պէտք է նշանակուին քրիստոնեայ օգնական վալի, եթէ վալին մահմեդական է և ընդհակառակը: Օգնականը պարտաւոր է տեղեկութիւններ տալ վալիին շրջանների փոքրամասնութեան ազգային պահանջների մասին և յարաբերութեան մէջ մտնել Կ. Պոլսում գտնուած վերոյիշեալ Յանձնաժողովի հետ: Այնուհետև հետեւալ մի շարք առաջադրութիւններ այն միջոցների մասին, որով նախազգուշացնում էին հայերի գէմ գործ դնելի բռնութիւնների մասին, մի տեսակ ժանդարմերիայի կազմակերպութիւն, որոնց մէջ կարող են նշանակուել նաև քրիստոնեաներ, դատաւարութեան բարեկաւումն և այլն: Նոյն թուի 20 հոկտեմբերի տաճկաց կառավարութիւնը յայտնել է համաձայնութիւն առաջարկուած բարենորոգութիւններն իրականացնելու, բայց իրօք այդ խոստումներն ևս մնացին անկատար: Գլխաւոր պատճառներից մէկը, որոնք թոյլատրել են Դրան և այդ անգամ էլ բանի տեղ չգնելու պետութիւնների պահանջները, էր այն, որ այդ ժամանակ Ռուսաստանն ամբողջապէս տարուած էր Հեռաւոր Արևելքում իւր ծրագիրներով և դժուար համար չէ ցանկացել Տաճկաստանում գործերի փոփոխութիւնն ու բարդութիւնը: Այդ այն ժամանակ էր, երբ այդպիսի ձևակերպումներ, ինչպէս «Օտոմանեան կայսրութեան ամբողջութեան պահպանութիւնը» և «status quo» Բալկաններում, համարուում էին ուսաց քաղաքականութեան ամենախմաստուն պայմանական խօսքը Մօսկի Արևելքում: Հէնց այդ մտքով էլ, որ համահաւասարագործ է բարենորոգութիւնների գործերն արխիւ տալուն, կազմուել է Ֆրանսիայի և Ռուսաստանի միացած պետութիւնների խուսափողական պատասխանը այն առաջարկութեան, որ 1896 թ. հոկտեմբեր ամսին Անգլիայի կողմից՝ յօգուտ հայերի աւելի վճռական միջոցներ ձեռք առնելու մասին:

Տաճկաստանն՝ իմանալով որ Եւրոպան ոչ մի իրական միջոց ձեռք չէ առնելու՝ ոչ միայն Հայաստանում որ և է բարենորոգութիւն չարաւ, այլ, ընդհակառակը, հէնց առաջին տարին՝ 1895 թ. հոկտեմբերին տուած խոստումից յետոյ, նշանաւոր դարձեց Հայկական Զարդերով, երբ տասնեակ հազարներով մարդկանց զոհեր եղան:

Դրութիւնն այդպէս մնաց մինչև 1912 թ. և միայն Բալկանեան պատերազմը ստիպեց պետութիւններին զբաղուել Հայկական հարցով: Անցեալ տարուայ 7 յունիսի Ռուսաց արտաքին գործոց նախարարութիւնը պետութիւնների ուշադրութիւնն դարձրեց Հայկական վիլայէթների դրութեան վրայ, և Կ. Պօլսում վեց Եւրոպական պետութիւնների ներկայացուցիչներն սկսեցին խորհրդակցել Հայկական բարենորոգումների հարցի մասին: Այդ խորհրդակցութիւնների առաջին փուլը բարեկաշուի հետեանք չունեցաւ, որովհետեւ առաջ եկան չափազանց մեծ տարաձայնութիւններ Ռուսաստանի և եռեակ համաձայնութեան պետութիւնների մէջ մի կողմից, և եռեակ դաշնակիցների մէջ էլ միւս կողմից: Գերմանիան պնդում էր, որ ռուսական նախագիծը — վեց Հայկական վիլայէթները դարձնել ինքնավար քրիստոնեայ գնեւրալ-նահանգապետի գլխաւորութեամբ, չէ համապատասխանում երկրի ժողովրդեան իսկական պահանջներին, որովհետեւ նրանում մասնագետները կազմում են ազգաբնակչութեան աչքի ընկնող մեծամասնութիւնը: Ուստի Կ. Պօլսի խորհրդակցութիւնները վերջացան առանց որոշ հետեանքների, իսկ վերջերում բանակցութիւնները պետութիւնների մէջ վերստին վերանորոգուեցին, ըստ որում Ռուսաստանի և Գերմանիայի կառավարութիւնները ըստ երևոյթին համաձայնութեան եկան: Նոր տարուց առաջ լրագիրները հաղորդեցին, որ ոչ միայն պետութիւնները բարենորոգութիւնների որոշ նախագծի առթիւ համաձայնութեան են եկել, այլ որ արդէն Տաճկաստանն էլ իւր յօժարութիւնն է յայտնել:

Իսկութեամբ ծրագիրը դեռ յայտնի չէ, բայց լրագրական տեղեկութեամբ Հայաստանը կը բաժանուի երկու ինքնուրոյն մասի: Իւրաքանչիւրը կը լինի գլխաւորութեամբ գնեւրալ-նահանգապետի, որ կը նշանակուի Տաճկաց կառավարութեան կողմից մեծ պետութիւնների համաձայնութեամբ: Գնեւրալ-նահանգապետների մօտ պէտք է լինին օտարազգի խորհրդականներ, որոնք պէտք է հսկեն իրագործել տալու բարենորոգութիւնների ծրագիրը: Հայկական վիլայէթներում ներքին կառավարութեան վերաբերեալ հարցեր վճռելու համար հաստատում են չորջանային խորհուրդներ, բաղկացած հայերից և մասնագետներից հաւասար թուով: Բարենորոգութիւնների իսկական ծրագիրը պէտք է հրատարակուի մօտիկ ապագայում:

Արդեօք գոհացուցիչ կը լինին այդ բարենորոգութիւնները, որպէս զի հայերի դրութիւնը բարեփոխելու ոչ թէ միայն թղթի վրայ, այլ և իրականութեան մէջ էլ, վերջ դրուի քրդերի բռնութիւններին, և առաջ բերուի հայերի անձնութիւնը դէպի Տաճկաստանի կայսրութիւնը: «Բարենորոգութիւնների» բազմաթիւ փորձերի պատմութիւնը Տաճկաստանի ուրիշ մասերում չէ տրամադրում ներկայ դէպքումն էլ մեծ սպասելիքների: Հէնց Մակեդոնիայի օրինակը ներկայ դէպքում այդ նկատմամբ չափազանց խրատական է: Դուռը անթիւ անգամ խոստումներ է տուել Մակեդոնիայում վերականգնելու կարգը, պետութիւնների պահանջմամբ օտարազգի ժանդարմերիա է կարգուել և այլն: Մի խօսքով Մակեդոնիայում արուել է այն, ինչ որ ներկայումս պէտք է հանգստացնի Հայաստանը: Մինչդեռ այդ բոլոր «բարենորոգական» գործողութեան հետեանքները ոչ մի կերպ չեն արդարացրել քաղաքագէտների սպասածները, որոնք ձգտել են իրենց բարենորոգութիւնների բարդ նախագծերով պահպանել status quo Բալկաններում: Ուստի հիմք չկայ կարծելու, որ Հայաստանում հետեանքները այլ կերպ կը լինեն: Մանաւանդ որ Տաճկաց կառավարութիւնն շատ լաւ գիտէ, որ եւրոպական պետութիւնները դժուար թէ խոշոր վճռական միջոցների դիմեն: Գուցէ Տաճկաստանը անկեղծ կերպով աշխատի բարենորոգութիւնների իրազորման համար, եթէ երկիւղ կրէր, որ իւր կողմից տրուած խոստումները չկատարելու դէպքում, նորան սպառնում է հայկական վիլայէթների կորուստը: Բայց նա լաւ գիտէ, որ Ռուսաստանի կողմից հայկական վիլայէթները գրաւելուն, կամ գոնէ նրանց Ռուսաստանի ազդեցութեան ենթարկելուն հակառակ կը լինեն համարեա միւս բոլոր մեծ պետութիւնները, ոչ միայն եռապետական դաշնակցութիւնն, այլ և Ֆրանսիան, որի համար Ասիական Տաճկաստանի անխուսափելի մասնահատումն այդ դէպքում կը լինի շատ անցանկալի այն տեսակէտից, որ այն ժամանակ Անատոլիան կընկնի Գերմանիային: Դորա համար շատ հաւանական է, որ Տաճկաստանը կըսկսի դիմել իւր սիրած ձգձգումների սխառմին և թղթէ խոստումներին, որոնք իրականութեան մէջ թողնում են բոլոր չարազորութիւնները ոյժի մէջ: Տաճկաստանի այդ տեսակ վարմունքը աւելի ևս հաւանական է, որ հայկական հարցի հետ կապում են և ազգային անջատողական գաղափարը, աբիական Տաճկաստանի վայրենի ազգաբնակչութեան մէջ խմբական կոտորածների և ջարդերի բնաւորութիւնը ընդունող հայկական հարցը բարդացած է նորանով, որ նա նշանաւոր չարով սոցիալական, հողային հարց է: Հայաստանում հնրաւոր կը լինէր վերականգնել խաղաղութիւնը այն պայմանների օգնութեամբ, եթէ յաջողուէր

հողագործ հայերի հողային ստացուածքները անձեռնմխելի դարձնել, հայերի հողերը ազատել քրդերի և այլ թափառական ցեղերի յափշտակութիւնից:

Այդ յափշտակութիւնները առաջանում են մասամբ հայ ազգաբնակչութիւնից զանազան տեսակի տուրքեր առնելով և մասամբ ուղղակի կամայական ձևով, ինչպիսի հիմք էլ ունենան, թէկուզ ձևական: Այդ յափշտակութիւններին մասնակցել է հէնց նոյն իսկ ինքը տաճկական կառավարութիւնը, որը յաճախակի հայերի հողերը գրաւել է և յանձնել մահմեդականներին: Իսկ մինչդեռ թէկուզ այն շրջանակների մէջ անցկացրած հողային «Բարենորոգութիւնը», որ կըստիպէր թափառական քրդերին յարգանքով վերաբերուել դէպի Հայկական հողային ունեցուածքը, անկասկած կը յարուցանէր ընդդէմ տաճիկ կառավարութեան Հայաստանի ազգաբնակչության հէնց այն տարրերը, որոնք վերջին տասնամիակում այնտեղ եղել են նորա գլխաւոր նեցուկը: Հասկանալի է, որ տաճիկաց կառավարութիւնը հափաղանց տհաճութիւնով կը ձեռնարկէր այդ բարենորոգութեան՝ որը Հայաստանում խաղաղութիւնը վերականգնելու ամենից անյոյստաձգելի միջոցներից մէկն է երևան գալիս:

Քաղաքական և սոցիալական բարենորոգութիւնները իրագործելու համար, որոնք զեռ կարող են Տաճկաստանը Ասիայում վերակենդանացնել, անհրաժեշտ է ամենից առաջ հաստատուն կազմ, որ ապահովի նորա ազգաբնակչութեանց իրական իրաւանց հաւասարութիւնը: Բայց Տաճկաստանի քաղաքակրթական տնտեսական հաւասարակշռութիւնը, նորա ասիական տիրապետութեանց ազգաբնակչութեան ազգային-կրօնական խայտաբղէտութիւնը և միջազգային դրութիւնը, որի մէջ գտնուում է Օտոմանեան կայսրութիւնը, յամենայն դէպս այդ տեսակ վերածնութեան հնարաւորութիւնը չափազանց կտակածելի են դարձնում: Ի. Օ. Լեվիե:

Ի նկատի առնելով սոյն յօդուածի կարեւորութիւնը՝ թարգմանեցինք «Русская Мысль» ամսագրի փետրվար համարից:

Վարդէն վարդապետ

ԻՍՍԼԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Ներսիսեան Թեմական Դպրանոցի վարչութիւնը մի գեղեցիկ միտք է յղացել, տօնել Ապրիլի 20-ին իւր երկարամեայ վաստակաւոր ուսուցիչ Ի. Յարութիւնեանի 25 ամեայ ուսուցչական և 30 ամեայ զրական գործնէութեան յօրեիւանը: Ի. Յարութիւնեանը ծնուել է 1863 թ. Ապրիլին թիֆլիսում*): Սկզբնա-

*) Կենսագրականը քաղեցինք «Հորիզոն» թերթից: